

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված երկբևեռ աշխարհում տարածաշրջանային հակամարտությունները գերտերություններն օգտագործում էին իրենց նպատակներին հասնելու համար՝ դրանք պահելով կառավարելիության սահմաններում: ԽՍՀՄ փլուզման արդյունքում երկբևեռ աշխարհի վերանալը հանգեցրեց նրան, որ հակամարտությունները, որ նոր ժամանակներում ստացել են «ինքնության հակամարտություններ» անվանումը, սկսեցին «ապրել իրենց կյանքով»՝ հաճախ չենթարկվելով արտաքին ազդեցությունների<sup>1</sup>: Ճիշտ է, վերջին երկու տասնամյակների ընթացքում հակամարտությունների թիվը նվազման միտումներ ունի (1989 թ.՝ 36 հակամարտություն աշխարհի 32 շրջաններում, 1994 թ.՝ համապատասխանաբար 32 և 28, 1995 թ.՝ 30 և 25)<sup>2</sup>, սակայն դրանց լուծումը մնում է ամենաբարդ խնդիրներից մեկը:

Հակամարտությունների կարգավորման ոլորտում վերջին շրջանի առավել արդիական հարցերն են Կոսովոյի անկախության ճանաչումը և դրա նշանակությունը՝ որպես հակամարտությունների լուծման նախադեպ: Այս երկու հարցադրումներն ունեն մի շարք ընդհանրություններ. մասնավորապես, դրանց առնչությամբ իրարամերժ տեսակետներ ներկայացնող երկու կողմերը գործնականում նույնն են, ու թեև հարցադրումները վերաբերում են միջազգային իրավունքին, սակայն կողմերի հարցադրումներն ու հիմնավորումները դիտարկվում են զուտ քաղաքական շահերի հարթությունում և հղի են լուրջ հետևանքներով: Այդ առումով զգալի վտանգներ են պարունակում երկրորդ հարցադրմանը վերաբերող մոտեցումներն ու դրանց հիմնավորումները, թեև այն առաջացել է որպես հետևանք առաջինի: Ոմանք պնդում են, որ բոլոր հակամարտությունները պետք է ունենան միասնական լուծում, և եթե ճանաչվում է Կոսովոյի անկախությունը, ապա ինքնաբերաբար պետք է ճանաչվի մյուս հակամարտություններում կողմ հանդիսացող չճանաչված պետությունների անկախությունը: Կոսովոյի անկախության ճանաչման կողմնակիցները պնդում են, որ դա առանձնահատուկ լուծում է եզակի դեպքի համար: Երկու կողմերն էլ, հավանաբար լավ պատկերացնելով իրենց անվերապահ դիրքորոշումների թերությունները, չեն էլ փորձում հիմնավորումներ բերել դրանց համար՝ սահմանափակվելով սոսկ քաղաքական

<sup>1</sup> **Zartman I. W.**, *Toward the Resolution of International Conflicts/Peacemaking in International Conflicts: Methods and Techniques*. Ed. By I.W. Zartman and J. L. Rasmussen, Washington, 1997, p. 3-22.

<sup>2</sup> **Солленберг М., Валленштейн П.**, *Крупные вооруженные конфликты (СИПРИ 1996. Вооружения, разоружение и международная безопасность, М., 1997, с. 31-45)*.

հայտարարություններով: Եթե առանձին պետությունների պարագայում դա ինչ-որ կերպ հասկանալի է (թեև անընդունելի), ապա միջազգային կազմակերպությունների դեպքում նման գործելակերպը պարզապես քայքայիչ ազդեցություն կարող է ունենալ այդ կազմակերպությունների համար, քանի որ դրանք ստեղծված են որոշակի սկզբունքների ու արժեքների հիման վրա, և խնդիրների լուծումն էլ պետք է տեղավորվի դրանց շրջանակներում: Հետևաբար, հակամարտությունների կարգավորման մեխանիզմների կիրառման հիմնավորվածությունը չափազանց կարևոր է ոչ միայն հակամարտությունների կողմերի կամ շահեր հետապնդող երկրների, այլև կարգավորմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների և դրանց բոլոր անդամ պետությունների համար:

Ինչ վերաբերում է անկախության ճանաչմանը, ապա դա միջազգային իրավունքի շրջանակներում հանգում է ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման խնդրին, ինչը այլ ուսումնասիրության առարկա է<sup>3</sup>: Ավելին, նախադեպը միջազգային իրավունքի աղբյուր չէ: Կոստվոյի կամ մեկ այլ հակամարտության պարագայում այդ իրավունքի կիրառումը ոչ թե պետք է որևէ երկրի կամ երկրների խմբի կամքի պարտադրանք լինի մյուսներին, այլ ունենա իր հատակ հիմնավորումը: Ջարմանալին այն է, որ ժողովրդավարության ամենացայտուն դրսևորումներից մեկի կիրառումը, ունենալով մի շարք հաջող օրինակներ, կոշտ դիմադրության է արժանանում Եվրոպայում, որը ժողովրդավարության օրրանն է: Այդ դիմադրությունը կառուցված է մի շարք սպառնալիքների վրա. 1) կան բազմաթիվ խնդիրներ, որոնց պարագայում եվրոպական մեկ օրինակը կարող է խթանիչ դերակատարություն ունենալ, և Եվրոպան կվերածվի սուր հակամարտությունների թատերաբեմի. 2) եթե ճանաչվում է որևէ մեկի անկախությունը, ապա պետք է ճանաչվի նաև մյուսներինը և այլն: Թվում է, թե այս սպառնալիքները ի չիք են դառնում ամերիկյան և եվրոպական կառույցների պաշտոնյաների հայտարարություններով, որ Կոստվոյի դեպքը եզակի է, և անկախության ճանաչումն էլ այլ կիրառում չի ունենա: Բհարկե, դրանով կարելի կլիներ հարցը փակված համարել, եթե նշվեին ինքնորոշման սկզբունքի կիրառման տեսակետից ի հայտ եկած, այդ դեպքի եզակիությունը հաստատող հատկանիշները՝ ձևակերպված ՄԱԿ-ի և հակամարտությունների կարգավորման մասնակից այլ միջազգային կազմակերպությունների հիմնարար արժեքների ու սկզբունքների շրջանակում: Ընդ որում, նույն հարցադրումը արդարացի է նաև մյուս կողմի նկատմամբ. ինքնորոշման իրավունքի կիրառման տեսակետից բխող այդ ուր հատկանիշներն են, որոնք ցույց են տալիս, որ բոլոր հակամարտությունները պետք է ունենան նույն լուծումը: Մինչ այդ հատկանիշներին անդրադառնալը արժե նշել ինքնորոշման իրավունքի կիրառման տարբեր ելքեր ունեցած մի շարք դեպքերից մեկ գույգ՝ հանրաքվեով Քվեբեկում անկախության մերժումն ու Արևելյան Թիմորի անկախության հռչակումը:

<sup>3</sup> Halperin M., Scheffer D., Sall P., *Self-Determination in the New World Order*, Washington DC, 1992, *Luchterhandt O.*, *Nagorny Karabakh's Right to State Independence According to International Law*, Boston, 1993. **Թորոսյան Ս. Ս.**, Հակամարտությունների կարգավորման իրավական հիմքը. տարածքային ամբողջականություն, թե՞ ինքնորոշման իրավունք (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 1, էջ 3-16):

մը: Այսպիսով, խնդիրը հանգում է ինքնորոշման իրավունքի կիրառման հատկանիշների ձևակերպմանը: Կարելի է ընտրել այդ խնդրի լուծման տարբեր ճանապարհներ: Այս հոդվածում ընտրված է երկու՝ Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծությունը, ինչն ընդունված մեթոդ է հակամարտությունների ուսումնասիրության ոլորտում<sup>4</sup>: Հակամարտությունների վերլուծությանը նվիրված ուսումնասիրությունների մի խումբը շեշտը դնում է անկախ կառուցվածքային փոփոխականների (գործոնների) վրա (հասարակության կառուցվածքը, տնտեսության մակարդակը և այլն), մյուս խումբը՝ ընթացակարգային կամ կախյալ փոփոխականների (հակամարտության մասնակիցների և այլ կողմերի քաղաքականությունը և այլն)<sup>5</sup>: Միաժամանակ, համեմատական ուսումնասիրություններում կիրառվում է դեդուկտիվ (տեսական դատողություններից դեպի իրողություններ) կամ ինդուկտիվ (իրողություններից դեպի տեսական ընդհանրացումներ) մոտեցումը, թեև դրանց միաժամանակյա կիրառման փորձեր ևս կան<sup>6</sup>: Ստորև փորձ է արվում Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի պարագայում համեմատական վերլուծության համար կիրառել ընդհանրացված մոտեցում՝ երկբաղադրիչ վերլուծության միջոցով: Առաջին բաղադրիչի համար որպես ուսումնասիրության առարկա ընտրված են կարգավորման նկատմամբ առավել ակտիվ դիրքորոշում դրսևորած երկու միջազգային կազմակերպություններում՝ Միավորված ազգերի կազմակերպությունում (ՄԱԿ) և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽՄՎ), ընդունված բանաձևերը, իսկ երկրորդ բաղադրիչի համար՝ այդ հակամարտությունների ընթացքների առանցքային իրադարձությունները, որոնց համադրումը հնարավորություն է տալիս ուրվագծելու հակամարտությունները բնորոշող հատկանիշների շրջանակը և դրա հիման վրա պարզել, թե ինչքանով են արդարացի վերոհիշյալ հայտարարություններն այն մասին, որ Կոսովոյի հակամարտությունը եզակի դեպք է՝ անկախության ճանաչման տեսակետից:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը Կոսովոյի հակամարտության կարգավորման վերաբերյալ: ՄԱԿ-ն ընդունել է 5 հինգ բանաձև<sup>7</sup> 1998-1999 թթ. ընթացքում: Խնդրո առարկայի տեսակետից առանձնանում են առաջինն ու վերջինը: 1998 թ. մարտին ընդունված 1160 բանաձևը՝

- դատապարտում էր սերբական ոստիկանական ուժերի կողմից ուժի անհամաչափ կիրառումը Կոսովոյում քաղաքացիական անձերի և խաղաղ ցուցարարների նկատմամբ, ինչպես նաև Կոսովոյի ազատագրական բանակի կամ այլ անձանց ու խմբերի իրականացրած ահաբեկչական գործողությունները,

<sup>4</sup> Bloomfield L., Moulton A., *Managing International Conflicts: From Theory to Policy*, N.Y., 1997; Лебедева М. М., *Политическое урегулирование конфликтов: подходы, решения, технологии*, М., 1997; Бусыгина И., *Северная Ирландия и Чечня: некоторые параллели (Мировая экономика и международные отношения, 1996, N 11, с. 109-113)*.

<sup>5</sup> Лебедева М. М., *Межэтнические конфликты на рубеже веков (методологический аспект) (Мировая экономика и международные отношения, 2000, N 5, с. 31-39)*.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> www.un.org

- կոչ էր անում Կոստվոյի ալբանական համայնքին իր նպատակներին հասնել բացառապես խաղաղ միջոցներով, իսկ Բելգրադին՝ Կոստվոյին առաջարկել իրական քաղաքական գործընթաց,

- սահմանում էր խնդրի լուծման երկու սկզբունք՝ Հարավսլավիայի Միութենական Հանրապետության տարածքային ամբողջականության հարգում և Կոստվոյի ավելի բարձր կարգավիճակի սահմանում, որը կներառի ինքնավարության (ավտոնոմիայի) ավելի բարձր մակարդակ և իրական ինքնակառավարում,

- կոչ էր անում Հարավսլավիայի Միութենական Հանրապետության իշխանություններին և Կոստվոյի ալբանացիների ղեկավարներին երկխոսություն սկսել հակամարտության կարգավորման համար,

- անդամ բոլոր երկրներին արգելում էր զենքի և զինամթերքի տրամադրում «Հարավսլավիայի Միութենական Հանրապետությանը՝ ներառյալ Կոստվոն»,

- առաջարկում էր ԵԱՀԿ երկարատև առաքելությունների ղեկավարության վերանայում,

- կոչ էր անում 1993 թ. ՄԱԿ-ի 827 բանաձևի հիման վրա ստեղծված Միջազգային ատյանին՝ տվյալներ հավաքել Կոստվոյում տեղի ունեցած բռնությունների վերաբերյալ և քննել իր իրավասությանը ենթակա խախտումները:

Երեք ամիս հետո հաջորդ՝ 1199 բանաձևի ընդունման պատճառը մի քանի հարյուր հազար մարդկանց տեղահանումն էր Կոստվոյում, ուժի կիրառման հետևանքով: Նախորդ բանաձևում արձանագրված մոտեցումներից զատ, նոր բանաձևը հաստատում էր փախստականների և տեղահանված անձանց՝ հարազատ վայրեր վերադառնալու իրավունքը և պահանջում պայմաններ ստեղծել դրա համար:

Երրորդ՝ 1207 բանաձևն արձանագրում էր Հարավսլավիայի Միութենական Հանրապետության անբավարար համագործակցությունը Միջազգային ատյանի հետ, իսկ չորրորդը՝ 1239, մարդկային աղետի առկայությունը «Հարավսլավիայի Միութենական Հանրապետության Կոստվոյում և նրա շուրջ»: Բանաձևում ամենուրեք Կոստվոն նշվում է որպես Հարավսլավիայի Միութենական Հանրապետության մաս: Վերջին՝ 1244 բանաձևը, որն առավել հաճախ է հիշատակվում Կոստվոյի հակամարտության կարգավորմանը նվիրված քննարկումներում և հրապարակումներում, կրկնում է նախորդ բանաձևերի ամփոփ մոտեցումները՝ ևս մեկ անգամ ընդգծելով կարգավորման երկու վերոհիշյալ սկզբունքները՝ Հարավսլավիայի Միութենական Հանրապետության տարածքային ամբողջականության հարգում և Կոստվոյի ավելի բարձր կարգավիճակի սահմանում, որը կներառի ինքնավարության (ավտոնոմիայի) ավելի բարձր մակարդակ և իրական ինքնակառավարում: Այն միաժամանակ պահանջում է՝

- անհապաղ դադարեցնել Կոստվոյի ազատագրական բանակի և Կոստվոյի ալբանացիների մյուս զինված կազմավորումների հարձակողական գործողությունները, ապառազմականացնել դրանք,

- Կոսովոյից դուրս բերել միութենական և հանրապետական ռազմական և ոստիկանական ուժերը,

- Ժամանակավոր վարչակազմի ստեղծում՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առաջարկի:

Թեև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն այլ բանաձևեր չի ընդունել՝ Կոսովոյի հակամարտության կարգավորման վերաբերյալ, սակայն 2003 թ. դեկտեմբերին հրապարակվել է «Չափորոշիչներ Կոսովոյի համար» վերնագրով մի փաստաթուղթ, որը արժանացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հավանությանը: Համաձայն ՄԱԿ-ի SC/7951 փաստաթղթի, «Չափորոշիչները» պետք է Կոսովոն նախապատրաստել վերջնական կարգավիճակին: Դրանք վերաբերում են ութ ոլորտի՝ ժողովրդավարական ինստիտուտների գործունեություն, օրենքի գերակայություն, տեղաշարժման ազատություն, վերադարձ և վերաինտեգրում, տնտեսություն, իրավունքների հարգում, երկխոսություն Բելգրադի հետ, Կոսովոյի պաշտպանության մարմիններ: Համաձայն «Չափորոշիչների» նախաբանի՝ դրանցով պետք է ուղղորդել Կոսովոյի առաջընթացը՝ Կոպենհագենյան չափանիշների վրա հիմնված Եվրամիության Կայունության և ասոցիացիայի գործընթացի շրջանակներում: Այս նոր քաղաքականության էությունը շատ լավ արտացոլում է «նախ չափորոշիչներ, ապա կարգավիճակ» նշանաբանը. Կոսովոյի, ինչպես նաև Սերբիայի համար որպես ցանկալի նպատակ հռչակվում է ԵՄ-ի անդամակցությունը՝ որպես փոխզիջումների գին, ըստ այդ նպատակի՝ ուղղորդվում են զարգացումները, և երբ չափորոշիչները ներդրված լինեն, այսինքն՝ Կոսովոն և Սերբիան պատրաստ լինեն ԵՄ անդամակցության, Կոսովոյի կարգավիճակի հարցը էապես կկորցնի իր սրությունը ԵՄ սահմաններում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Ընդունվել է չորս բանաձև՝ 822, 853, 874 և 884, բոլորն էլ 1993 թ., որպես հետևանք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից պատերազմական գործողությունների դուրս գալու: Բանաձևերը փոխանցում են Անվտանգության խորհրդի

- լուրջ մտահոգությունը ռազմական գործողությունների սաստկացման, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններ հայկական ուժերի ներխուժման առիթով,

- մտահոգությունը մեծ թվով քաղաքացիական անձանց տեղահանության վերաբերյալ,

- հարգանքը Ադրբեջանի և տարածաշրջանի մյուս երկրների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ,

- ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման և Ադրբեջանի գրավյալ տարածքներից դրանք գրաված ուժերի դուրսբերման պահանջը,

- հորդորը վերականգնելու հակամարտության լուծման բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում,

- կոչը Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ազդելու «Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հայերի վրա, որպեսզի այդ կողմը կատարի ՄԱԿ-ի ԱԽ Բանաձևերի պահանջները և ընդունի Մինսկի խմբի առաջարկությունները»,
- կոչը անդամ երկրներին՝ զենքի և զինամթերքի մատակարարումներից զերծ մնալու վերաբերյալ,
- աջակցությունը տեղահանված անձանց իրենց տները վերադառնալու նպատակով: Վերջին բանաձևում նշվում է նաև Ադրբեջանի կողմից ուժի անհամարժեք կիրառման մասին:

Գարեղի է արձանագրել, որ թեև երկու հակամարտությունների վերաբերյալ բանաձևերն ընդունվել են հակամարտությունների ընթացքի տարբեր փուլերում (առաջին դեպքում ռազմական գործողություններն ընթանում էին վիճարկվող տարածքում, երկրորդ դեպքում՝ դրա սահմաններից դուրս), սակայն հիմնական սկզբունքների և ձևակերպումների առումով բանաձևերն ունեն անկախության ճանաչմանն առնչվող միայն մեկ էական տարբերություն. եթե Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ բանաձևերը հակամարտության լուծման որևէ մոտեցում չեն պարունակում, այլ սույլ առաջարկվում է ընդունել Մինսկի խմբի՝ առաջարկները, ապա Կոստվոյի պարագայում սահմանված են կոնկրետ սկզբունքներ՝ Հարավսլավիայի Միությանական Հանրապետության տարածքային ամբողջականության հարգում և Կոստվոյի ավելի բարձր կարգավիճակի սահմանում, որը կներառի ինքնավարության (ավտոնոմիայի) ավելի բարձր մակարդակ և իրական ինքնակառավարում:

Ակնհայտ է, որ մոտեցումների այս տարբերությունը չի կարող լինել Կոստվոյի հակամարտության եզակիությունը հաստատող գործոն: Ավելին, անկախության ճանաչման տեսակետից այն Լեռնային Ղարաբաղի օգտին է, որի կարգավիճակի վերաբերյալ բանաձևերը որևէ մոտեցում չեն արձանագրում, մինչդեռ Կոստվոյի համար նախատեսվում է ինքնավարություն: Այդուհանդերձ, 2006 թ. սկզբին, առանց նոր բանաձևի ընդունման, կտրուկ շրջադարձ կատարվեց. ՄԱԿ-ի ներկայացուցիչներն առաջ մղեցին Կոստվոյի անկախության ճանաչման խնդիրը՝ անգամ փոխելով կարգավորման ընթացքի կարգախոսը. «չափորոշիչների ներդրումը կարգավիճակի որոշմանը գուցահեռ»:

*Կոստվոյի հակամարտությունը ԵՆԽՎ բանաձևերում:* Կոստվոյի վերաբերյալ ԵՆԽՎ-ն ընդունել է<sup>8</sup> մեկ տասնյակից ավելի բանաձևեր և այլ փաստաթղթեր՝ սկսած 1996 թվականից: Առաջին փաստաթղթերն անդրադառնում էին հակամարտության գոտում մարդու իրավունքների և ազատությունների, ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը, երկխոսության հաստատմանը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի կիրառմանը: Միաժամանակ արձանագրվում էր, որ Կոստվոն պետք է ստանա նոր կարգավիճակ՝ ինքնավարության ավելի բարձր մակարդակով: ԵՆԽՎ փաստաթղթերն ավելի ծավալուն դարձան այն բանից

<sup>8</sup> www.coe.int

հետո, երբ Սերբիայի և Չեռնոգորիայի միութենական պետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ և, հատկապես, 2004 թ. բախումներից հետո: Խնդրո առարկայի տեսակետից հատկապես կարևոր են 1375(2004), 1453(2005) և 1533(2007) բանաձևերը: Առաջինը, դատապարտելով 2004 թվականի բախումները, այդպիսիք բնութագրեց որպես ոչ ալբանական բնակչության էթնիկ գոտում, արձանագրելով, որ փախրստականների նոր ալիքը հետ շրջեց վերադարձի գործընթացը, և «ալբանացիների ու սերբերի հաշտեցումը քիչ հավանական է թվում»: Բանաձևը Կոստվոյի խնդրի կարգավորման միակ իրավական հիմք է համարում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևը, և անկախ Կոստվոյի կարգավիճակի հետագա ճշման արդյունքներից՝ կայունության և եվրոինտեգրացիայի առանցքային տարր է համարում «Կոստվոյի չափորոշիչների իրացումը», կարևոր է համարում ԵՄ համաձայնագրերի կիրառումը Կոստվոյում, Կոստվոյի ղեկավարներին կոչ է անում դադարեցնել աջակցությունը ծայրահեղական խմբերին, որոնք էթնիկական բռնություններ են հրահրում սերբերի և մյուս ոչ ալբանացիների նկատմամբ: ԵՄԽՎ վերջին բանաձևի թե՛ բովանդակությունը, թե՛ ընդունման գործընթացը էապես տարբերվում են նախորդ բանաձևերից: Այն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերջին բանաձևն ընդհանրապես չի հիշատակում, քանզի նախատեսվում է Ահտիսաարիի պլանի ընդունումը՝ Կոստվոյի անկախության ճանաչման գաղափարի հիման վրա: Ավելին, բանաձևի նախագծի 4-րդ կետը, որը քվեարկությամբ լիովին խմբագրվեց և վերածվեց սոսկ Սերբիային ուղղված կոչի՝ ճկուն և գործնապաշտ դիրքորոշում որդեգրելու վերաբերյալ, մինչ խմբագրումը հստակ արձանագրում էր, որ «Կոստվոյի անկախությունն այն լուծումն է, որը կարող է ապահովել տևական, երկարաժամկետ խաղաղություն և կայունություն Կոստվոյի և ամբողջ տարածաշրջանի համար, և միակ լուծումն է, որ համապատասխանում է կոստվոյի մեծամասնության կամքին»: Թեև, ի վերջո, ընդունվեցին ավելի մեղմ ձևակերպումներ՝ առանց անկախության ուղիղ հիշատակման, սակայն ուշադրության են արժանի բանաձևի 7-րդ և 8-րդ կետերը, որոնք արձանագրում են, որ, «որպես վերջին և ծայրահեղ միջոց ի վերջո կարող է պահանջվել լուծում, որը կպարտադրի միջազգային հանրությունը» և «Արևմտյան Բալկաններում կայունության հաստատման համար, անկախ Կոստվոյի կարգավիճակից, կպահանջվի ապահովել մի շարք պայմաններ՝ Կոստվոյի սահմանադրության համապատասխանեցում եվրոպական չափանիշներին ժողովրդավարության, պատշաճ կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերում»: Միաժամանակ նշվում է, որ Կոստվոյի չափորոշիչները բավարար չափով չեն կիրառվում, ինչպես նաև առաջընթաց չկա Կոստվոյում մարդու իրավունքների ոլորտում ռազմավարության մշակման հարցում:

*Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ԵՄԽՎ բանաձևերում:* Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵՄԽՎ-ն ընդունել է երեք փաստաթուղթ, որոնցից առավել ամբողջականը և կարևորը 1416(2005) բանաձևն է: Այն, ի տարբերություն այս հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերի,

անդրադառնում է կարգավիճակի խնդրին. «Վեհաժողովը վերահաստատում է, որ տարածաշրջանի անկախությունը և անջատումը որևէ պետությունից կարող է տեղի ունենալ միայն օրինական և խաղաղ գործընթացի միջոցով, որը հիմնված է այդ տարածաշրջանի բնակիչների ժողովրդավարական աջակցության վրա»: Բանաձևը հակամարտության ընթացքում տեղի ունեցած էթնիկ հիմքով լայնատարած վտարումները բնութագրում է որպես էթնիկ զտում հիշեցնող երևույթ՝ հղումներ անելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին և կրկնելով դրանցում ներկայացված մոտեցումները, հավաստում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների միջոցով հակամարտության խաղաղ կարգավորման ջանքերին իր մանդատի շրջանակներում աջակցելու պատրաստակամությունը, դատապարտում է աստեղության քարոզչությունը, կոչ է անում հաշտության և փոխվստահության ամրապնդման:

Այսպիսով, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների վերաբերյալ ընդունված ԵՄԽՎ բանաձևերի վերլուծությունը ևս վկայում է, որ այդ հակամարտությունները բնորոշելու համար օգտագործված են նույնատիպ մոտեցումներ և ձևակերպումներ՝ երկու էական տարբերությամբ. Կոսովոյի ալբանացիների վերաբերյալ գնահատականներն ավելի կոշտ են, իսկ հակամարտության տարածքի կարգավիճակի առումով, եթե Կոսովոյի համար նշվում է ավելի բարձր ինքնավարությունը, ապա Լեռնային Ղարաբաղի պարագայում նշվում է անկախանալու համար անհրաժեշտ չափանիշը, որը որևէ կերպ չի սահմանափակվում Ադրբեջանի դիրքորոշմամբ, այլ սոսկ պայմանավորվում է Լեռնային Ղարաբաղի բնակիչների ժողովրդավարական աջակցությամբ (1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվե): Հետևաբար այս դեպքում ևս, ինչպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի պարագայում, չկա որևէ հիմք Կոսովոյի հակամարտությունը եզակի համարելու և այդ հիմքով միայն Կոսովոյի անկախության ճանաչման համար: Ճիշտ հակառակը, այդ առումով ԵՄԽՎ բանաձևերը ակնհայտորեն նպաստավոր են Լեռնային Ղարաբաղի համար:

Այսպիսով, ՄԱԿ-ի և ԵՄԽՎ-ի բանաձևերը, արձանագրելով այդ կազմակերպությունների մոտեցումները Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններին առնչվող մի շարք գործոնների վերաբերյալ, չեն պարունակում անկախության ճանաչման տեսակետից որևէ առանձնահատկություն Կոսովոյի համար: Ավելին, այդ առումով երկու կազմակերպությունների բանաձևերն էականորեն ավելի բարենպաստ են Լեռնային Ղարաբաղի համար:

Կա Կոսովոյի հակամարտության ենթադրյալ առանձնահատկությունը բացահայտելու ևս մեկ հնարավորություն՝ դրա զարգացման ընթացքի համեմատական վերլուծությունը, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության զարգացման ընթացքի նկատմամբ՝ հանգուցային իրադարձությունների և փաստերի հիման վրա, որոնք բերված են աղյուսակում և ընտրված են վերոհիշյալ բանաձևերում օգտագործված գործոնների հիման վրա:

Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների հանգուցային իրադարձությունների և փաստերի համեմատական աղյուսակ<sup>9</sup>

	Հատկանիշ կամ իրադարձություն	Կոսովո	Լեռնային Ղարաբաղ
1	Կարգավիճակը մինչև հակամարտությունը, դրա հաստատման միջավայրը և ձևը	ինքնավար երկրամաս միութենական պետության (Հարավսլավիա) հանրապետության (Սերբիայի) կազմում 1946 թ.	ինքնավար երկրամաս միութենական պետության (ԽՍՀՄ) հանրապետության (Ադրբեջանի ԽՍՀ) կազմում 1923 թ.,
2	Թվային գերակշռություն ունեցող ժողովուրդը՝ ըստ մարդահամարի	ալբանացիներ՝ 2/3, 1961 թ. մարդահամար	ստիպողաբար հայեր՝ 94,4 % 1923 թ. մարդահամար, 84,4% 1939 թ., 75,9% 1979 թ. <sup>10</sup>
3	Բողոքի ակցիաներ ճնշումների դեմ, ձևը	Կոսովոյի սերբեր՝ 1986 թ. խաղաղ ցույցեր	ԼՂ հայեր՝ 1967, 1977, 1987-1990 թթ., խաղաղ ցույցեր
4	Կարգավիճակի լուծարում	1989 թ.	նոյեմբերի 23, 1991 թ.
5	Անկախության հռչակում	հուլիս 1990 թ.	հունվարի 6, 1991 թ.
6	Անկախության հանրաքվե	1991 թ.	դեկտեմբերի 10, 1991 թ.
7	Մետրոպոլիայի ճնշումներ, բռնություններ	1981 թ., 1997 թ., 1998 թ.	փետրվարի 28-29, 1988 թ. հունվարի 13-15, 1990 թ., 1991 թ.
8	Հակամարտության ծավալման սահմաններ	հակամարտության տարածաշրջան	մետրոպոլիայի հայաբնակ տարածքներ, հակամարտության տարածաշրջան, դրան հարակից ռազմական ագրեսիայի շրջանը
9	Զինված բախումներ	1996-1998 թ., ՆԱՏՕ մարտ-հունիս, 1999 թ.	1992-1994 թթ., Ադրբեջանի ռազմական ագրեսիա
10	Արտաքին ռազմական միջամտություն	ՆԱՏՕ 1999 թ.	-
11	Հատուկ կարգավիճակ	ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևի հիման վրա ստեղծվեց UNMIK-ը	հունվար 1989-դեկտեմբեր 1991, ԽՍՀՄ Գ.Խ որոշմամբ դադարեցվել է ԼՂԻՄ մարզային խորհրդի գործունեությունը, և ստեղծվել է Հատուկ կառավարման կոմիտե՝ Մոսկվային ուղիղ ենթակայությամբ
12	Զինված բախումների վերսկսում	2004 թ., ալբանացիների նախաձեռն.	-
13	Փախստականներ, տեղահանված անձինք	+	+
14	Կարգավորմամբ զբաղվող միջազգ. կազմակերպություն	ՄԱԿ	ԵԱՀԿ

<sup>9</sup> Աղյուսակը կազմվել է երկու աղբյուրների հիման վրա՝ **King I., Mason W., Peace at any Price, London, 2006, p. 265-278;** **Манасян А., Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Е., 2005.**

<sup>10</sup> **НКАО. 50 лет в дружной Советской семье, Степанакерт, 1973, с. 33; Численность и состав населения СССР, М., 1984, с. 126.**

Աղյուսակում բերված փաստերի համեմատությունը ակնառու վկայում է, որ էական տարբերություն երկու հակամարտությունների միջև չկա: Ավելին, այն փաստերը, որոնց վերաբերյալ կան տարբերություններ, Լեռնային Ղարաբաղի հանրապետության օգտին են: Մասնավորապես, 3-րդ կետում արձանագրված՝ էթե Կոստվոյում բողոքի առաջին գործողությունները նախաձեռնել է երկրամասի սերբական փոքրամասնությունը՝ Կոստվոյի երկրամասային իշխանությունների ճնշումների դեմ, ապա Լեռնային Ղարաբաղում մարզի բնիկ մեծամասնությունը բողոքում էր մետրոպոլիայի՝ Ադրբեջանի ճնշումների դեմ: Կարող է թվալ, որ կարգավիճակի լուծարման և անկախության հռչակման հաջորդականությունը Կոստվոյի օգտին է, քանի որ վերջինս այդ քայլին է դիմել ի պատասխան մետրոպոլիայի ճնշման՝ ինքնավարության լուծարման: Սակայն Լեռնային Ղարաբաղի պարագայում ևս ամեն ինչ անթերի է՝ հաշվի առնելով երկու կարևոր հանգամանք: Նախ, 1989 թ. հունվարի 20-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ԼՂԻՄ-ում ստեղծեց խորհրդային կենտրոնական կառավարության ուղղակի ղեկավարության ներքո գտնվող Հատուկ կառավարման կոմիտե (համեմատական աղյուսակ, կետ 11), ապա ԽՍՀՄ Նախարարների կոմիտեն, որպես դրա հետևանք, ԼՂԻՄ բոլոր կառույցներն ու կազմակերպությունները դարձրեց միութենական ենթակայության: Հետևաբար, Ադրբեջանը չէր կարող լուծարել իր ենթակայության տակ չգտնվող միավորը: Ավելին, Ադրբեջանը դա անելու իրավունք չունեի ևս երկու հիմնարար պատճառներով: 1990 թ. հոկտեմբերի 18-ին Ադրբեջանը ընդունել է «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտ, որով հռչակել է իր անկախությունն ու ԽՍՀՄ կազմից դուրս գալը, 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության ժառանգորդ լինելը, Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատման ապօրինությունը: Հետևաբար, դրանով Ադրբեջանն իր կազմից դուրս էր համարում Լեռնային Ղարաբաղը, որը Խորհրդային Ադրբեջանի կազմ էր մտցվել, այն էլ ապօրինաբար, նման լիազորություն չունեցող կուսակցական (Կավբյուրո) մարմնի որոշումով: Այդ սահմանադրական ակտը նշանակալից է ևս մեկ պատճառով: Քանի որ այն հռչակում էր ԽՍՀՄ կազմից Ադրբեջանի դուրս գալը, Լեռնային Ղարաբաղը, հիմք ընդունելով 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը (մասնավորապես, 3-րդ հոդվածը, ըստ որի, «ինքնավար հանրապետությունների և ինքնավար միավորների ժողովուրդներն իրավունք ունեն ինքնուրույնաբար վճռելու ԽՍՀՄ-ի մեջ կամ ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու հարցը...», «ինքնավար հանրապետություններ, ինքնավար երկրամասեր և ինքնավար մարզեր ունեցող հանրապետությունը յուրաքանչյուր ինքնավար միավորի համար պետք է կազմակերպի առանձին անկախության հանրաքվե...»), 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց «Լեռնային Ղարաբաղի անկախության մասին հռչակագիրը», իսկ նույն թվականի դեկտեմբերի 10-ին անցկացվեց անկախության հանրաքվե՝ միջազգային դիտորդների մասնակցությամբ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այդ ժամանակ դեռևս ադրբեջանցիները չէին հեռացել Լեռնային Ղարաբաղից:

Հանրաքվեին մասնակցել է բնակչության 82,2 տոկոսը (չի մասնակցել ադրբեջանցիների մեծ մասը), որոնց 98,89 տոկոսը կողմ է քվեարկել անկախությանը: Ակնհայտ է, որ այս ամենից հետո՝ 1991 թ. նոյեմբերի 23-ին, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծարումը բացարձակապես որևէ իրավական հիմք չունի: Արժե նշել նաև մեկ հանգամանք. ԼՂԻՄ լուծարումը նաև հակասում է «Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզի մասին» Ադրբեջանական ԽՍՀ օրենքին<sup>11</sup>, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի համաձայնության, և օրենքի փոփոխությունները պետք է իրականացվեն այդ խորհրդի ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Պատկերը ամբողջական լինելու համար արժե վերլուծել նաև այն միակ դեպքը, երբ փորձ է արվում Կոսովոյի առանձնահատկության ինչ-որ հիմնավորում բերել: Դա ԵՄ արտաքին կապերի գերագույն կոմիսար Խավիեր Սոլանայի ձևակերպումն է. «Գոյություն ունեն հարավսլավական բռնության և անհամաձայնության արդյունքում տրոհումների պատմական ենթատեքստ (նախապատմություն), ինչպես նաև մինչև 1999 թ. տեղի ունեցած զանգվածային բռնություններ և ճնշումներ: Դա եզակի իրավիճակ է նաև ՄԱԿ-ի 1244 բանաձևի հիման վրա Կոսովոյում 1999 թվականից միջազգային վարչակազմի կառավարման առումով»<sup>12</sup>: Ինչ վերաբերում է միջազգային վարչակազմի կառավարմանը, ապա այս գործոնի առումով էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ունի զուգահեռներ: Դա ներկայացված է աղյուսակի կետ 11-ում: 1989 թ. հունվարին ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ դադարեցվել է ԼՂԻՄ մարզային խորհրդի գործունեությունը, և ստեղծվել է Հատուկ կառավարման կոմիտե՝ միութենական ուղիղ ենթակայությամբ: Այդ կարգավիճակը պահպանվել է մինչև 1991 թ. դեկտեմբեր, երբ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեն: Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ Կոսովոյում միջազգային վարչակազմի կառավարում մտցվեց մարդկային աղետը կանխելու նպատակով: Այն դեպքում, երբ միջազգային հանրությունը որևէ գործնական քայլ չձեռնարկեց Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի սանձազերծած պատերազմը դադարեցնելու համար, թեև զոհերն ավելի շատ էին (զոհվածներ 24000, որից հայ՝ 7500, փախստականներ և տեղահանվածներ՝ 1000000, որից հայ՝ 400000), քան Կոսովոյի հակամարտության ժամանակ (զոհվածներ՝ 5952, որից ալբանացի՝ 2000, փախստականներ և տեղահանվածներ՝ 1300000)<sup>13</sup>: Պատերազմը հաջողվեց դադարեցնել միայն 1994 թ., երբ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը ստիպված էր պատերազմական գործողությունները տեղափոխել ԼՂ հարակից շրջաններ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի տարածքի անվտանգությունն ու անհասանելիությունը ադրբեջանական հրետանուց:

Կոսովոյի առանձնահատկությունը պայմանավորող երկրորդ հանգամանքը, ըստ Խ. Սոլանայի, բռնությունների և բախումների նախապատ-

<sup>11</sup> Avakian Sh., Nagorno Karabakh: Legal Aspects, Yerevan, 2005.

<sup>12</sup> <http://news.trend.az/cgi-bin/readnews2.pl?newsId=967342&lang=RU>

<sup>13</sup> Шакарянц С., К вопросу о механизмах урегулирования конфликта между НКР и Азербайджаном (In Depth Analysis, 2006, N 2 [12].

մութունն է: Այդ առումով ևս Կոստվոն որևէ առավելություն չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ընդ որում, խոսքը չի վերաբերում միայն Բաքվին, Սուվալյիթին կամ ղարաբաղյան հակամարտության նորագույն շրջանին՝ սկսած 1988 թ.: Պետք է հաշվի առնել և՛ խորհրդային տարիներին տեղի ունեցած ճնշումներն ու բռնությունները, և՛ անցած դարասկզբին Բաքվում և Շուշիում տեղի ունեցած ջարդերը, և՛ Նախիջևանի ճակատագիրը<sup>14</sup> (միանգամայն արդարացի է Մինսկի խմբում Ռուսաստանը ներկայացրած համանախագահ Վ. Կազիմիրովը. «առանց իմանալու, թե ինչ և ինչպես է տեղի ունեցել Նախիջևանում, հնարավոր չէ հասկանալ Ղարաբաղյան հակամարտությունն ընդհանրապես»<sup>15</sup>), և՛ Հայոց ցեղասպանությունը, քանզի Սուլանայի մասնանշած գործոնի առումով այս ամենը պակաս ազդեցիկ չէ:

Ակնհայտ է, որ Կոստվոյի «բացառիկության» հիմնավորմանն ուղղված Խ. Սուլանայի ջանքերը համոզիչ չեն՝ նշված գործոնների տեսակետից այդ հակամարտությունը Ղարաբաղյան հակամարտության հետ համեմատելու պարագայում: Սակայն այդ դեպքում ո՞րն է նման ջանքերի գործադրման դրդապատճառը: Կարելի է համաձայնել Ա. Ակսենյունովի հետ, որ Կոստվոյի կարգավիճակի որոշման վրա ազդող հիմնական գործոններն են<sup>16</sup>

- այբանական փոքրամասնության պահանջները, որոնք ուղեկցվում էին բռնության և միջազգային հանրության շանտաժի մեթոդներով,
- ԱՄՆ և Եվրոպայի շահերի համընկնումը Միլոշևիչի վարչակարգի տապալման հարցում,
- միջազգային ասպարեզում ուժերի նոր դասավորության պայմաններում ռազմաքաղաքական ճանապարհով այդ շահերից բխող իրողությունների հաստատում՝ առանց լայնածավալ հակամարտության ծագման վտանգի:

Այսինքն՝ Կոստվոյի բացառիկությունն արտահայտվում է նրանով, որ որոշ ազդեցիկ երկրների շահերից է բխում նրան անկախություն շնորհելը, և տարբեր կազմակերպությունների ու երկրների ներկայացուցիչների հայտարարությունները պարզապես այդ շահերը քողարկելու անհաջող փորձեր են: Այդ առումով ևս Կոստվոյի հակամարտությունը բացառիկ չէ: Որպես օրինակ կարելի է դիտարկել նաև Լեռնային Ղարաբաղի խնդրով Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Մ. Բրայզայի հայտարարությունները: Միանգամայն արդարացիորեն արձանագրելով<sup>17</sup>, որ հակամարտությունների կարգավորումը պետք է իրականացվի 1975 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքների շրջանակում<sup>18</sup>, նա ինքնորոշման իրավունքի իրացման ձևի ճշգրտումը համարում է երկու երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների խնդիրը՝ այդ շրջանակում ներառելով նաև հանրաքվեի մասնակիցների (Ադրբեջանի, թե՛ Լեռնային

<sup>14</sup> Avakian Sh., *Nakhichevan: Legal Aspects*, Yerevan, 2007.

<sup>15</sup> Казимиров В., *8 суждений на рассмотрение. Принципы межгосударственных отношений в политическом урегулировании конфликтов на Южном Кавказе (Голос Армении, 16.11.2006)*.

<sup>16</sup> Аксенов А. Г., *Самоопределение: между правом и политикой (Россия в глобальной политике, 2006, N 5, с. 185-198)*.

<sup>17</sup> Что общего между США и Нагорным Карабахом (*Время новостей, 06.08.2007*). ([www.vremya.ru/print/184195.html](http://www.vremya.ru/print/184195.html)).

<sup>18</sup> Թորոսյան Տ. Ս., նշվ. աշխ., էջ 3-16:

Ղարաբաղի բնակչություն) հարցը: Մինչդեռ մի քանի ամիս առաջ Մ. Բրայզան միանշանակ հայտնում էր, որ հանրաքվեին պետք է մասնակցի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ ներառյալ և մինչ հակամարտությունն այնտեղ ապրած ադրբեջանցիները: Ակնհայտ է, որ համանախագահներից մեկը, հիանալի գիտակցելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի անխոցելիությունը, փորձում է կոպտորեն նենգափոխել հակամարտության բնույթը՝ այն ներկայացնելով որպես տարածքային վեճ Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ երկու երկրների նախագահներին վերագրելով այդպիսի վեճին հատուկ լիազորություններ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահը «մոռանում է», որ ներկայացնում է ոչ թե իր երկիրը, այլ ԵԱՀԿ-ն, և իր միակ առաքելությունը գործընթացի ուղղորդումն է միջազգային իրավունքի շրջանակներում՝ անգամ անկախ կողմերի ցանկություններից, քանի որ անդամակցելով ԵԱՀԿ-ին և ՄԱԿ-ին՝ նրանք համաձայնել են գործել հայտնի սկզբունքների շրջանակում: Այդ առաքելության շրջանակներում տեղին չեն նաև Մ. Բրայզայի հղումները Ադրբեջանի սահմանադրությանը՝ ինքնորոշման իրավունքը չի կարող սահմանափակվել որևէ երկրի օրենսդրությամբ: Եվ որպեսզի Մինսկի խմբի համանախագահները ժամանակ առ ժամանակ «չմոռանան» հակամարտության բովանդակությունը, անհրաժեշտ է վերացնել Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների միջև եղած թեև ոչ վճռորոշ, սակայն Կոսովոյի համար բարենպաստ միակ տարբերությունը. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ բանակցությունների կողմ պետք է դառնա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որի՝ հակամարտության կողմ լինելն ամրագրված է պաշտոնական փաստաթղթերում<sup>19</sup>:

#### Եզրակացություններ

1. Հակամարտությունների ուսումնասիրության, համեմատական վերլուծության և միջազգային իրավունքի շրջանակներում դրանց լուծման համար համարժեք մեխանիզմներ առաջարկելու նպատակով անհրաժեշտ է հակամարտությունները բնորոշող հատկանիշների սահմանում, դրանց ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտում:

2. Հակամարտությունները բնորոշող հատկանիշների սահմանման համար միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի վերլուծությունը (միջազգային հանրության ընկալման չափում) և հակամարտությունների ընթացքի փաստագրական վերլուծությունը (փաստագրական չափում) բավարար են եզրակացնելու համար, որ Կոսովոյի հակամարտությունը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ առանձնահատուկ ճանաչելու որևէ հիմք չկա:

3. Թեև հակամարտությունների լուծման այս կամ այն մեխանիզմի ընտրության վրա ազդող գործոնների ազդեցությունը այդ ընտրության վրա տատանվում է լայն սահմաններում, սակայն բոլոր գործոնները

<sup>19</sup> **Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность. Приложение 12, Приложение 13, М., 2004.**

ներառող բազմակողմանի ուսումնասիրությունը անհրաժեշտ պայման է համարժեք լուծում ակնկալելու համար:

4. Կոսովոյի հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ առանձնահատուկ ճանաչելու որևէ հիմք չկա:

5. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ճիշտ ընկալման և համարժեք լուծման ակնկալման կարևոր պայման է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք մասնակցությունը ԼՂՀ կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին՝ որպես հակամարտության միջազգայնորեն ճանաչվող կողմ:

## **ОБЩНОСТЬ И ОТЛИЧИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ КОНФЛИКТОВ КОСОВО И НАГОРНОГО КАРАБАХА**

ТОРОСЯН Т. С.

### **Резюме**

В статье на основе метода сравнительного анализа рассматриваются общие характеристики и отличительные особенности конфликтов Косово и Нагорного Карабаха. При этом сравнение конфликтов проводится в двух направлениях – в правовом и фактологическом. В первом случае анализируются общие и отличительные характеристики резолюций, принятых Советом безопасности ООН и Парламентской Ассамблеей Совета Европы относительно конфликтов Косово и Нагорного Карабаха, а во втором предметом сравнительного анализа являются ключевые события в процессе этих двух конфликтов. Сформулирован круг общих характеристик и отличительных особенностей конфликтов Косово и Нагорного Карабаха. Результаты анализа явствуют о том, что несостоятельны утверждения относительно уникальности Косовского конфликта, разрешение которого требует применения особых механизмов.

В то же время каждый из конфликтов имеет свои особенности, которые в той или иной мере могут повлиять на процесс или выбор механизмов их разрешения. Следовательно, для адекватного выбора механизмов разрешения того или иного конфликта в рамках международного права необходимо всестороннее изучение конфликтов с целью выявления факторов, характеризующих их общие и отличительные особенности.